

## ԾՈՎԱՆԿԱՐԻՉ ԷՄՄԱՆՈՒԵԼ ՄԱՀՏԵՍՅԱՆ

Հայ ծովանկարիչների շարքում իր առանձնահատուկ տեղը ու դերը ունի Ռուսական կայսրության մեջ ստեղծագործած Էմմանուել Մահտեսյանը:

Հոդվածում ներկայացվում է նկարչի կյանքը, ստեղծագործական գործունեությունը, Մահտեսյանի և հայ մտավորականների միջև եղած կապը: Նկատվում է նաև Մահտեսյանի թողած ժառանգության մեջ Հովհաննես Այվազովսկու արվեստի թողած ազդեցությունը:

**Հանգուցային բառեր.** Էտյուդ, նկարչագեղ, ծովանկար, խճանկար, իմպրեսիոնիստ, սֆումատո, վրձնահարված, բացօթյա աշխատանք

Հովհաննես Այվազովսկու աշակերտներից և անմիջական հետևորդներից էր Էմմանուել (Մանուկ) Մահտեսյանը: Նա իր կենդանության օրոք հասավ ձանաչման, անգամ ծովանկարչության արքա Այվազովսկին բացի ջերմ վերաբերմունքից Մահտեսյանին վստահել է իր նկարների կրկնօրինակությունները: Մահտեսյանը մշտապես ներկայացվել է Ռուսաստանում կազմակերպված ցուցահանդեսներին, Եվրոպայում կազմակերպել անհատական նկարահանդեսներ. իր նկարները հաճախակի վերատպվել են կայսրության նշանավոր հանդեսներում, իսկ Սիմֆերոպոլում ստեղծել է քաղաքի առաջին համարամատչելի պատկերասրահը, որտեղ մի շարք նշանավոր արվեստագետների կողքին մշտապես ցուցադրվել

են նկարչի ստեղծագործությունները<sup>1</sup>: Մահտեսյանի նկարներից քիչ մասն են պահպանվել: Խորհրդային կարգերը հաստատվելուց հետո նկարչի աշխատանքները հանձնվեցին Սիմֆերոպոլի թանգարանին, որոնց զգալի մասն էլ ոչնչացավ Հայրենական մեծ պատերազմի ժամանակ: Այսօր Մահտեսյանի կտավների թերևս ամենահետաքրքրական հավաքածուն, թվով 12 աշխատանք, զարդարում է Հայաստանի ազգային պատկերասրահը:

Էմմանուել Մահտեսյանին մեզանում անդրադարձել են մի շարք արվեստաբաններ, սակայն որպես առանձին մենագրությունուններ մեծ է նկարչի եղբոր՝ Մինասի դուստր Լուկյա Մահտեսյանի և նույն Լ. Մահտեսյանի ու արվեստաբան Բորիս Զուրաբովի համահեղինակությամբ հրատարակված մեկ այլ աշխատությունը<sup>2</sup>:

Էմմանուել (Մանուկ) Մահտեսյանը ծնվել է 1857թ. ապրիլի 23-ին Ղրիմի հյուսիսային մասում գտնվող Արմյանսկի Բազար (Օրաբազար, այժմ՝ Արմյանսկ) հայաբնակ քաղաքում: Էմմանուելի հայրը՝ մանրածախ առևտրական Հակոբջանը ամուսնացած էր Հ. Այվազովսկու զարմուհու հետ, ահա և Այվա-

1 Հետաքրքիր զուգորդություն. կարծես շարունակելով իրենց ուսուցչի Հովհաննես Այվազովսկու գեղարվեստական դաստիարակության հայրենանվեր գործը (հիշենք 1880թ. Այվազովսկու հիմնածաննական ցուցասրահը, որը 1845թ. վերածվեց պատկերասրահի), այնպես էլ Այվազովսկու թոռ Ա. Գանգենը Օդեսայում, իսկ Մահտեսյանը Սիմֆերոպոլում բացեցին նշված քաղաքների առաջին պատկերասրահները:

2 Л. Магтесян, Эммануил (Манук) Магтесян, Ер., 1982. Л. Магтесян, Б. Зурабов, Эммануил Магтесян, М., 1987.

գովակին հաճախակի էր հյուրնկալվում Մահտեսյանների օջախում և օգտվելով առիթից տեղում էլ նյութեր հավաքում տարածաշրջանում ապրող չունակների կյանքից, ստեղծելով այդ շարքի մի քանի գլուխգործոցներ:

Քաղաքի հայկական եկեղեցուն կից գործել է ծխական դպրոց, որտեղ և հաճախել է Մահտեսյանը, և վերցրել նկարչության իր առաջին դասերը: Ի դեպ, այդ դպրոցի պատին կախված է եղել Հ. Այվազովսկու նկարներից մեկը, որը նվիրվել է նկարչի կողմից իր Արմյանսկի Բազար այցելություններից մեկի ժամանակ:

Այվազովսկու այցելությունները Արմյանսկի բազար և մեծ ծովանկարչի ստեղծագործությունը, որը ամեն օր էմանանուելի աչքի առջև էր, պատանու մոտ սերմանում են սեր դեպի նկարչությունը: Այդ ընթացքում էմանանուելը մատիտով վերարտադրում էր շրջակայքի գեղեցիկ տեսարանները, երբեմն էլ գնում էր քաղաքին հարևանությամբ Սև ծովի ափերը՝ նկարելով ծովափնյա տարբեր պատկերներ:

1870թ. էմանանուելը ընդունվում է ռուսական նախակրթարան (прогимназия)<sup>1</sup>, որտեղ պարտադիր դասընթացների մեջ էր մտնում նկարչությունը:

Մահտեսյանի նկարիչ դառնալու վորոշման մեջ մեծ դեր է ունեցել Հովհաննես Այվազովսկին: Պատմում են, որ Այվազովսկին Արմյանսկի Բազար հերթական այցելության ժամանակ հյուրնկալվելով իր գարնուհուն, տեսել է էմանանուելի նկարները, գրուցել պատանու հետ, ապա փոքր անց ուղարկել նկարչական պիտույքներ, խորհուրդ տալով խորանալ նկարչության բնագավառում և դիմել Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիա ուսանելու համար:

Մահտեսյանը դժվարին երկմտանքի մեջ է ընկնում: Նա նոր էր կորց-

րել իր հորը և ընտանեական հոգսերը մեծ մասամբ իր վրա էր: Սակայն մոր խորհրդով ու Այվազովսկու համապատասխան նամակով էմանանուելը 1877թ. մեկնում է Պետերբուրգ:

Չունենալով գիմնազիական ատեստատ նա դիմում է ակադեմիայի դեկավարությանը, որպեսզի իրեն վերցնեն որպես ազատ ունկնդիր: 1878թ. քսանմեկամյա Մահտեսյանը որպես ազատ ունկնդիր, ընդունվում է Կայսրական ակադեմիայի բնանկարչության բաժին՝ Վլադիմիր Օրլովսկու (1842-1914) դասարան:

Սկզբնական շրջանում էմանանուելը ապրում էր ծանր վիճակում: Գտնելով ազատ ժամանակ նա հաճախում էր ակադեմիայի կազմակերպած Գարնանային ցուցահանդեսներին, ուսումնասիրում այնտեղ գրեթե մշտապես ցուցադրվող Հովհաննես Այվազովսկու կտավները, կատարում դրանցից ընդօրինակություններ: Ահա հերթական ցուցահանդեսի ժամանակ Մահտեսյանը հանդիպում է Այվազովսկուն, որը խորհուրդ է տալիս երիտասարդ էմանանուելին ամառները աշխատել Թեոդոսիայում՝ բնության գրկում: Հետևելով Այվազովսկու խորհրդին Մահտեսյանը ամեն ամառ մեկնում է Թեոդոսիա՝ սովորում վարպետի «Գեղարվեստական արվեստանոցում», կատարում էտյուդներ, ուսումնասիրում ծովի ալիքների շարժը ու նյութականությունը:

Հետաքրքրական է 1885թ. օգոստոսի 12-ին Այվազովսկու ուղված նամակը ակադեմիայի կոնֆերենց-քարտուղար Պյոտր Իսենին. «Մեծարգո Պյոտր Ֆյոդորովիչ. Ես արդեն հաճույք եմ ունեցել գրելու Ձեզ, որ լրագրերում տպագրված հայտարարությունների շնորհիվ Ռուսաստանի բոլոր եզրերից երիտասարդներ են ժամանել, որոնցից երկուսը մեր ակադեմիայի սաներն են: Նրանք գրեթե բոլորը, և առանձնակի Մահտեսյանը, որը ակադեմիայի սան է, սքանչելի

1 Ռուսական կայսրությունում չորսամյա ուսումնական հաստատություն: Գործել է կրթարաններ չունեցող քաղաքներում:

էտյուդ է կատարել...»<sup>1</sup>:

Ասե՛նք, որ Մինասը բավական շնորհալի ջութակահար էր, ապրելով նույն միջավայրում Էմմանուելը սիրահարվում է այդ կախարդական գործիքին:

Մնալով Պետերբուրգում Մահտեսյանը համագործակցում է հանրահայտ «Нива» հանդեսի հետ. շուտով նկարչի «Թուրքական ավազակային նավը Ղրիմի ավերին» նկարը վերատպվում է հանդեսում, իսկ ռուս-ձապոնական պատերազմի ժամանակ «Նիվա»-յի խմբագրությունը գործուղում է Մահտեսյանին Հեռավոր արևելք, հանդեսի էջերի համար ստեղծելու պատերազմական թեմաներով պատկերներ: 1892թ. Մահտեսյանի նկարներից մեկը՝ «Լուսնյակ գիշեր Սև ծովում» վերատպվում է Սանկտ-Պետերբուրգում հրատարակվող գրական և գեղարվեստական «Аракс» հանդեսում:

1892թ. ավարտելով ակադեմիայի ողջ դասընթացները Մահտեսյանին շնորհում են «Ոչ դասական նկարչի» կոչում: Նույն թվականին Մահտեսյան եղբայրները արդեն ուսյալ կարգավիճակով վերադառնում են Ղրիմ: Կարճ ժամանակ անց Էմմանուելը տեղափոխվում է Թեոդոսիա: Այստեղ Մահտեսյանին հայրական ջերմ վերաբերմունքով է դիմավորում Հովհաննես Այվազովսկին, նաև առաջարկելով Միացյալ Նահանգներում 1893թ-ին նախատեսվող Չիկագոյում Համաշխարհային ցուցահանդեսի համար կատարել վարպետի նկարներից կրկնօրինակները:

Դա մեծ պատիվ էր Մահտեսյանի համար. ծովանկարչության արքան՝ իր առաջին ուսուցիչը վստահում էր այդ պատասխանատու գործը: Ահա, օր ու գիշերվա աշխատանքի շնորհիվ Մահտեսյանը կատարում է երկու ընդօրինակություն<sup>2</sup>: Մահտեսյանի հանդես

համակրանքը դրսևորվել է նաև Այվազովսկու ընտանիքի կողմից: Հետագայում՝ 1904-ին՝ Այվազովսկու մահից հետո Մահտեսյանը այցելելով Թեոդոսիա հյուրընկալվում է իր ուսուցչի տանը, այրու՝ Աննա Մկրտիչովնայի մոտ, վերջինս Մահտեսյանին սիրով տրամադրում է Այվազովսկու արվեստանոցը, որտեղ Էմմանուելը ստեղծում է մի քանի աշխատանք:

Ղրիմում եղած ժամանակը Մահտեսյանը չէր կտրում իր կապը Պետերբուրգի՝ առավել ևս ակադեմիայի հետ: Նա պարբերաբար իր աշխատանքները ուղարկում էր նկարիչների միության ցուցահանդեսներին:

Էմմանուել Մահտեսյանի ուսանողական և միջին շրջանի աշխատանքներում երևում էր Այվազովսկու արվեստի ազդեցությունը: Չնայած Էմմանուելը շատ ժամանակ շփվում էր ռուսական արվեստում հեղափոխական միտումներով տոգորված արվեստագետների հետ, և դա զգացվում է նրա կտավներում, բայց «այվազովսկյան» ազդեցությունը մեծ էր:

Այդ հանգամանքը ժամանակին նկատվել է Հովհաննես Այվազովսկին: Դիմելով իր աշակերտներին, որնց մեջ էր նաև Մահտեսյանը նա ասում է. «Ենթադրում եմ, որ ձեր մեջ կան մարդիկ, որոնք իրենց նվիրել են բնանկարին և ծովանկարին, որոնց վրա հնարավոր է կրի իմ նկարները ազդեցություն: Զգուշացնում եմ ձեզ, խուսափել տարվելուց ու կրկնօրինակելուց այս աշխատանքներից, քանի որ նմանակումը խանգարում է նկարչի ինքնուրույնության զարգացմանը»<sup>3</sup>:

Ընդհանրապես՝ հետագայում էլ Մահտեսյանը փոխելով իր նկարչական մոտեցումները այնուամենայնիվ մնաց Այվազովսկու ազդեցության ներքո: Դա է պատճառը, որ Մահտեսյանը ոչ միայն համարվեց մեծ ծովանկարչի աշակեր-

1 Լենինգրադի պետական կենտրոնական պատմական արխիվ, ֆոնդ N 789:

2 Այդ մասին տե՛ս Էմմանուել Մահտեսյան, «Մշակ», Թիֆլիս, 1902, N 100:

3 Н. Барсамов, Иван Константинович Айвазовский, Симферополь, 1953, ст. 161.

տը այլև հոգեհարազատ հետևորդը:

Համեմատելով Այվազովսկու արվեստի հետ Մահտեսյանի մի շարք նկարներում ակնառու երևում է նկարչի տարվածությունը իր ուսուցչով: Դիտելով Հայաստանի ազգային պատկերասրահում ցուցադրվող «Փոթորկից առաջ» (1907) մեծաչափ աշխատանքն անմիջապես ստաբերում ես Այվազովսկու «Սև ծովը» (1881): Երկուստեք նույն կոմպոզիցիան է, միայն ծովը ու երկինքը, ալիքների ձախից աջ ռիթմիկ շարժը, ամպամած, գորշ երկինքը, (անգամ կտավի չափերը գրեթե նույնն են): Թեպետ միայն փոքր ինչ մուգ գունաշարը և մի քանի աննշան փոփոխությունները առանձնացնում են Մահտեսյանի կտավը Այվազովսկու «Սև ծով»-ից:

Այվազովսկու ազդեցությամբ է վրձնած «Փոթորիկ ծովի վրա» (1898) նկարը: Նավաբեկությունից հրաշքով փրկված նավաստիները մաքառում են զարհուրելի ալիքների մեջ: Կարծես ստեղծող իններորդ ալիքը հիմա կուլ կտա իրենց: Սակայն ծովի ու երկնքի գրեթե չտարբերակվող հատվածում երևում են ձայերը. մի բան, որը բնորոշ է «այվազովսյան» լավատեսությանը: Աշխատանքը իր թեմայով և կատարման ձևով մեզ հիշեցնում է Այվազովսկու «Իններորդ ալիքը» (1850, Պետական ռուսական թանգարան): Անգամ ծովի խորքից դուրս եկող կործանիչ ալիքը իր ձևով և դիրքով կարծես նույն Այվազովսկու իններորդ ալիքն է: Մահտեսյանի «Փոթորիկում» նավակը՝ անգամ ավել ցույց տվող նավաստու դիրքը ու շարժումը մեզ հիշեցնում է սրանիվ տասնվեց տարի առաջ ստեղծված Այվազովսկու «Փոթորիկը» (1872):

1895թ. վերադառնալով Թոեդոսիայից Արմյանսկի բազար, տեսակցելով իր սորը և եղբորը էմմանուելը մշտական հաստատվում է Սիմֆերոպոլում: Այդտեղ Մահտեսյանը ամուսնանում է բավական ապահովված ընտանիքի դստեր՝ Եկատերինա Քրիստաֆորի հետ:

1895թ. դեկտեմբերի սկզբներին Այվազովսկու բարի խորհրդով Մահտեսյանը կայացնում է իր վաղեմի ցանկությունը. Սիմֆերոպոլի Հասարակական ժողովի ցուցասրահում 185 աշխատանքով բացվում է նկարչի առաջին անհատական ցուցահանդեսը: Ցուցահանդեսի կապակցությամբ ստվարածավալ հողվածով արձագանքում է Սիմֆերոպոլի «Таврические губернские ведомости» թերթը<sup>1</sup>:

Շուտով Մահտեսյանը իր առանձնատանը բացում է քաղաքի առաջին հանրային պատկերասրահը, ուր բացի իր ստեղծագործություններից ներկայացվում են նկարչին նվիրված ռուս մեծանուն արվեստագետների գործեր: Որոշ ընդհատումից հետո՝ 1897թ-ից Մահտեսյանը պարբերաբար նկարներ է ուղարկում Պետերբուրգում կազմակերպվող ակադեմիայի ցուցահանդեսներին<sup>2</sup>: Այրելով Սիմֆերոպոլում էմմանուելը չեր բավարարվում քաղաքի նկարչագեղտեսարաններով, նա պարբերաբար շրջագայում էր տարածաշրջանով՝ մասնավորապես այցելում Յալտա, կատարում բազմաթիվ նկարներ և էտյուդներ: Գնալով մեծանում է նկարչի ճանաչումը: Մահտեսյանի ստեղծագործությունների վերատպությունները երևում են ռուսական հանրահայտ հանդեսների էջերին<sup>3</sup>:

Ազատ ստեղծագործական վիճակը բավականին փոփոխություն է մտցնում

1 «Таврические губернские ведомости», Симферополь, 1895, N 228.

2 Տե՛ս Каталог весенней выставки в залах Императорской Академии художеств, 1897: Каталог весенней выставки... 1898: Каталог весенней выставки... 1899: Каталог весенней выставки..., 1900: Ըստ երաժշտագետ Կարա-Սուրբայի Մահտեսյանը միարժամանակ ցուցադրվել է «Պերեդվիժնիկների» կազմակերպած ցուցահանդեսներին (տե՛ս С. Кара-Мурза, Армяне в искусстве, «Армянский сборник», 1911): Այդ մասին գրում է նաև «Գեղարվեստ» հանդեսը (տե՛ս Մեր կորուստները. էմմանուել Մահտեսյան, «Գեղարվեստ», Թիֆլիս, 1909, N 3, էջ 168):

3 Տե՛ս «Живописное обозрение», Санкт-Петербург, 1899, N 21: «Петербургская жизнь», Санкт-Петербург, 1899, N 343:

Մահտեսյանի արվեստում: Արդեն լիովին ինքնուրույն, առանց իր ակադեմիայի պրոֆեսորների և Այվազովսկու հսկողության, Մահտեսյանը ստեղծում է մի շարք ծովանկարներ, որնցում արդեն երևում են ուրույն ձեռագր հատկանիշներ: Տանջալից աշխատանքը բերում է որոշակի արդյունք. ռուսական նկարչության հսկան՝ Իլյա Ռեպինը Պետերբուրգյան ցուցահանդեսներից մեկում տեսնելով Մահտեսյանի «Փոթորկի սկիզբը» խորհուրդ է տալիս Էմմանուելին այն պահել իր պատկերասրահում, որպես եռուն ու փրփրուն ալիքների հազվագյուտ կենդանի պատկեր<sup>1</sup>:

1901թ. անսպասելի վատանում է Մահտեսյանի առողջությունը: Ակադեմիական ցուցահանդեսին մասնակցելուց հետո բժիշկների խորհրդով Էմմանուելը մեկնում է Ավստրո-Հունգարիայի կայսրությունում գտնվող Մարիմբադ հանգստյան գոտի (այժմ՝ Մարիանսկե-Լազնե, Չեխիա):

Առիթը բաց չթողնելով Մահտեսյանը իր հետ տանում է Դրիմում և Սիմֆերոպոլում կատարած նկարները և նույն թվականին Վիեննայում Մահտեսյանը բացում է Եվրոպայում իր առաջին անհատական ցուցահանդեսը: Այն մեծ արձագանք է ստանում Ավստրիայի արվեստասեր հասարակայնության կողմից: Մամուլը անդրադառնալով Մահտեսյանի ստեղծագործություններին հատկանշում է նկարչի բացառիկ տաղանդը:

Հաջող կայացած ցուցահանդեսից հետո, արդեն ապաքինված, Մահտեսյանը տուն վերադառնալու ճանապարհին ուղևորվում է Ժնև, ապա Իտալիա՝ Ֆլորենցիա, Նեապոլ, Հռոմ, տեսնում և ուսումնասիրում վերածննդի մեծերի գործերը, ծանոթանում անտիկ ճարտարապետությանը: Հռոմում Մահտեսյանը կազմակերպում է Եվրոպայում իր

երկրորդ անհատական ցուցահանդեսը: Արձագանքում է տեղի մամուլը, իհարկե ամենուր նշելով նրա՝ Այվազովսկու աշակերտը լինելու փաստը:

Ընդհանրապես Եվրոպայով ճամփորդությունը, նոր հոսանքներին ծանոթանալը ինչ որ չափով փոփոխություն է մտցնում Մահտեսյանի արվեստի մեջ, սակայն փոփոխությունը ակնառու չէր:

Մահտեսյանը մնաց հավատարիմ պատանեական տարիներից սերմանված ռեալիստական-ռոմանտիկ դեգերումներին: Սակայն չմոռանաք, որ Էմմանուելը հավատարիմ լինելով իր սկզբունքներին ստեղծեց մի քանի սքանչելի գործեր, որոնք բարձր գնահատվեցին անգամ առաջադեմական դիրքորոշումների կողմնակիցների կողմից: Եվ ահա այս համատեքստում Մահտեսյանը համարվեց Կիմերյան դպրոցի կառկառուն ներկայացուցիչներից մեկը: Մահտեսյանի նկարները միշտ համեմատվել են իր ուսուցչի՝ Հովհաննես Այվազովսկու արվեստի հետ. փնտրվել թե՛ նմանություններ և թե՛ կատարման ձևի տարբերություններ: Դրանք մեծ մասամբ տեղ են գտել նկարչի մասին անդրադարձաց ռուսական պարբերականներում լույս տեսած հոդվածներում:

Մահտեսյանը մի շարք իր աշխատանքներում ջրի նյութականությունը հասցնում է քանդակային տպավորության, նա ծովափնյա ժայռերը պատկերում է խճանկարի տեխնիկայի ձևերով, իսկ ծովի ալիքների վրա ընկած լույսի ցուլքերը դրվում էին արդեն իմպրեսիոնիստների մոտ կիռարվող թանձր ու համարձակ վրձնահարվածներով, որն և տալիս է շարժուն էֆեկտներ: Այվազովսկու մոտեցումը փոքր ինչ այլ էր: Նա բնության երազկոտ պոետն էր: Իսկ իր արևամուտի տեսարանները դիտողի մոտ հայելապատ տպավորություն են թողնում, անգամ հիշեցնում վերածնունդի ժամանակաշրջանի «սֆումատոն»:

Սիմֆերոպոլում արդեն ինքնուրույն

1 Այդ մասին տե՛ս Ս. Բաբիեան, Է. Մահտեսիեան եվ նրա նկարները, «Հուշարար», Թիֆլիս, 1908, N 17, էջ 255:

ստեղծագործելը, պարբերաբար բացօթյա աշխատանքը, եվրոպական ճամփորդությունները իրենց դրական ազդեցությունն են թողնում Մահտեսյանի վրա: Գնալով փոփոխվում է նկարչի ներկայանակը, իսկ վրձնահարվածները դառնում համարձակ: Այվագովսկյան արվեստից քիչ հեռացած «Ժայռեր ծովափին» նկարում մասամբ զգացվում է սիմվոլիստական միտումներ: Այստեղ չկա քաղկենի հասարակության աչքը շոյող արհեստական էֆեկտներ: Կուսական բնության մի անկյուն, որտեղ լռության մեջ իրար հենված ժայռերն են ու լազուր ծովը:

Լիովին թարմ շնչով են վրձնած Մահտեսյանի էյուրոները: Նկարիչը հաճախ էր դուրս գալիս բացօթյա աշխատանքի, ուսումնասիրելով տեղայնքը, նկարների համար պատրաստել նյութեր: Ահա և հենց այդ պահերին Մահտեսյանը շատ ժամանակ տեղում ստեղծում էր ավարտուն աշխատանքներ: Ծովաեզրին կատարած գործերում նկարիչը հավատարիմ էր մնում բնության պահին հարազատ մնալու սկզբունքին, իսկ արդեն Եվրոպայից ծանոթ ինպրեսիոնիստական էֆեկտները մեկընդմեջ երևում են նրա կտավներում:

1901թ. սեպտեմբերին Մահտեսյանը եղբոր հետ գալիս են Հայաստան: Այստեղ գերված իրենց հայրենի բնաշխարհով Մահտեսյանը անցնում է աշխատանքի: Ցավոք Հայաստանին անդրադարձաց նկարներից այսօր մեզ հայտնի է Հայաստանի ազգային պատկերասրահում պահվող «Տեսարան եկեղեցիով և Արարատի ֆոնով» (1904) աշխատանքը<sup>1</sup>: Ընդհանրապես Մահտեսյանի կապվածությունը իր նախնիների հետ գրեթե չի ընդհատվել, բացի Արմյանսկի բազարում և Այվագովսկու հետ եղած շփումներից էմանանուելը հետագայում՝ Յալթայում եղած ժամանակ բարեկամական կապի մեջ է մտ-

նում տեղի հայ համայնքի հետ (այդտեղ ապրում էին շուրջ 1000 հայ), պարբերաբար այցելելու և կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարյանին, շփվում գրող Ալեքսանդր Ծատուրյանի և նկարիչ Վարդգես Սուրենյանցի հետ, հաստատում նոր կապեր Յալթայում գտնվող հայ մտավորականների հետ: Սիմֆերոպոլի հայկական դպրոցին է հանձնել թանկագին մի կտավ, օգնել դպրոցի թատերական խմբին, նկարել բեմի վարագույրը, և ինչպես նշում է Պերճ Գրիգորյանը. «Դա այն ժամանակ էր, երբ ցարական կառավարության հրամանով փակվում էին հայկական դպրոցները»<sup>2</sup>: Այդ ամենի հետ մեկտեղ Սիմֆերոպոլում և Արմյանսկում պարբերաբար մասնակցել է իր հայրենակիցների համար կազմակերպված բարեգործական միջոցառումներին:

Վերադառնալով Սիմֆերոպոլ Մահտեսյանը շրջագայում է Յալթայի ավերով, նոր նյութեր հավաքելով ստեղծում նոր նկարներ: Ցավոք նկարչի ֆիզիկականը վատանում է, սակայն հանգստանալու, առողջությունը վերականգնելու բաժիշկների խորհուրդը Մահտեսյանը անտեսում է. նա աշխատում է օր ու գիշեր: Այդպես էլ իր Սիմֆերոպոլի արվեստանոցում 1908 թվականի նոյեմբերի 5-ին էմանանուել Մահտեսյանը մահանում է, կիսատ թողնելով իր «Առավոտ» նկարը:

Մահտեսյանը մնաց հայ և ռուս ժողովուրդների մշակություն, որպես ծովի բանաստեղծ: Նա վաստակեց ժամանակի արվեստասեր հասարակայնության համակրանքը, դարձավ իր միջավայրի ծովանկարչության մեծանուն ներկայացուցիչներից մեկը: Նա հավատարիմ մնաց Այվագովսկու դպրոցին, ստեղծելով իր ձևի մեջ չքնաղ գործեր:

1 Նկարը ստեղծվել է Հայաստանից վերադառնալուց չորս տարի անց:

2 Պ. Գրիգորյան, Ծովի երգիչը, «Գարուն», Եր., 1983, N 4 էջ 95:

## ХУДОЖНИК-МАРИНИСТ ЭММАНУИЛ МАГДЕСЯН

### АРА АКОПЯН

Эммануил Магдесян, чья творческая деятельность протекала в Российской Империи, занимает особое место в ряду армянских художников-маринистов

В статье представлены сведения о жизни и творчестве художника, отмечена связь между Магдесяном и армянской интеллигенцией. Проведен анализ его наследия, в ходе которого выявлено значительное влияние искусства Ованнеса Айвазовского на произведения Магдесяна.

## SEA PAINTER EMMANUEL MAHTESYAN

### АРА НАКОВЯН

Emmanuel Mahtesyan, who composed in Russian Empire, has his particular place and role in the series of the Armenian sea painters. The artist's life, creative activity, the connection between Mahtesyan and Armenian intellectuals are presented in the article.

In the heritage left by Mahtesyan Hovhannes Ayvazovki's art influence is noticed.